Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1734-Ն

որոշմամբ հաստատված կարգի 30-րդ կետի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԾԱԳԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1734-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) մեկնարկած պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Ադոնցի փողոցի N 4/3 հասցեի N 265 բնակարանի և N 265 ավտոկայանատեղիի շահառու՝ Արմեն Արամի Վարդանյանը սույն թվականի մարտի 14-ին դիմում է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագրով իր ունեցած իրավունքը պահանջի իրավունքի զիջման հատուցելի գործարքով երրորդ անձի փոխանցելու վերաբերյալ:

Անշարժ գույքի նկարագիրը և իրավունքի օտարման գինն ու պայմանները՝ համաձայն Որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետի 9-րդ ենթակետի բ) պարբերության

1. Անշարժ գույքի հասցեն	**Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Ադոնցի փողոցի 4/3 (չորս կոտորակ երեք)** հասցեում գտնվող «Միկշին» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական **26032019-01-0250**) վրա կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի թիվ **7 (յոթ)** մասնաշենքի (Երևանի քաղաքապետի կողմից **07.05.2018թ.** համաձայնեցված թիվ **01/18-05/1-Գ-1664-365** կառուցման նախագիծ, **07.05.2018թ.** թիվ **01/18-Գ-1664-434** շինարարության թույլտվություն) **2-րդ հարկի, 48.93 քառ.մետր** մակերեսով նախագծային թիվ **265 (երկու հարյուր վաթսունհինգ)** բնակարան (հատակագիծը կցվում է), այսուհետ՝ Բնակարան, և նախագծային համար **265 (երկու հարյուր վաթսունհինգ)** ավտոկայանատեղի, միասին (հետագա փոփոխություններով)՝ Անշարժ գույք, առանձին (հետագա փոփոխություններով)՝ Անշարժ գույքի միավոր
2. Անշարժ գույքի վիճակը	ներքին հարդարմամբ՝ Որոշմամբ հաստատված պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարանների վաճառքի կարգի հավելվածով նախատեսված բնութագրերին համապատասխան
3. Իրավունքի օտարման գինը՝ ըստ շահառուի առաջարկի	**107,000 (մեկ հարյուր յոթ հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ**՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը: Պայմանագրի կնքման պահին և վճարման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված ԱՄՆ

	դոլարի փոխարժեքին համապատասխան
4. Վճարման պայմաններ	անկանխիկ եղանակով փոխանցման միջոցով՝ առանց հիփոթեքային վարկավորման կամ գործող հիփոթեքային պայմանագրի պարտավորությունների ստանձնման

Սույն հայտարարության հրապարակումից մինչև օրացուցային 14-րդ օրը ներառյալ հավակնորդների ցուցակում ընդգրկված ծառայողները կարող են սույն կարգի համաձայն հայտ ներկայացնել օտարվող գույքային իրավունքն օտարողի դիմումում առաջարկված գնով և վճարման պայմաններով ձեռքբերման համար: Մեկից ավելի հայտերի դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն օրացուցային 7-օրյա ժամկետում կազմակերպում է վիճակահանություն: Նախնական պայմանագրից ծագած իրավունքները երրորդ անձին օտարելու նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախնական համաձայնություն հայցած շահառուին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն ներկայացնում է օտարման համաձայնություն մեկ հավակնորդի դեպքում՝ միակ հավակնորդին, իսկ մեկից ավելի հավակնորդների դեպքում՝ վիճակահանության արդյունքներով որոշված հավակնորդին օտարելու մասին:

Սույն ծրագրի շրջանակներում հավակնորդ են համարվում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2018 թվականի սեպտեմբերի 5-ի N 111-Ա հրամանի առաջին կետով հաստատված հավելվածում ընդգրկված այն ծառայողները, ովքեր Որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի համաձայն ինքնաբերաբար հանված չեն հավակնորդների ցուցակից:

Ընդ որում, սույն ծրագրի շրջանակներում հավակնորդների ցուցակում ընդգրկված ծառայողի կողմից մասնակցության հայտը ներկայացվում է վերջինիս գործատուի միջոցով՝ հաստատելով, որ տվյալ հավակնորդի զբաղեցրած պաշտոնը համապատասխանում է Որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

Հեռախոս՝ 011621714, 011621776
Էլ.փոստ՝ petbnakaran@minurban.am

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 256
ՏԻՊ 24



ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ 265
ՏԻՊ 24
ՄԱՍՆԱՇԵՆՔ 7
ՄՈՒՏՔ 12
ՀԱՐԿ 2
ԲՆԱԿԱՐԱՆ 265
ՄԱԿԵՐԵՍ 48.93 ՔՄ



	ԲՆԱԿԱՐԱՆ ՏԻՊ 24	48.93 մ^2
1	Հոլլ	2.39 մ^2
2	Ընդհանուր սենյակ	22.35 մ^2
3	Խոհանոց	7.67 մ^2
4	Ննջասենյակ	11.59 մ^2
5	Սանհանգույց	4.93 մ^2